Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ <<ՀՀ Արարատի մարզի Գեղանիստի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի կենսաբանություն (26 դասաժամ), երաժշտություն (12 դասաժամ), ֆիզկուլտուրա (18 դասաժամ), տեխնոլոգիա (6 դասաժամ), կերպարվեստ (4 դասաժամ) և դասվար (2 հատ) առարկաների ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթին մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթի մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը որին հավակնում է (Ձև1),

2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3. Հանրակրթության մասինե ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում)

4. Անձնագրի պատճենը,

5. Ինքնակենսագրություն (Ձև 5),

6. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջներին բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

7. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

8. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

9. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հունվարի 30-ը ներառյալ ամեն օր ժամը 10.00-ից մինչև 14.00-ը բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից՝ ՀՀ Արարատի մարզի Գեղանիստի միջնակարգ դպրոցում. հասցեն՝ ՀՀ Արարատի մարզ գ. Գեղանիստ 21/1:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի: Մրցույթը տեղի կունենա 2024թ. Փետրվարի 1-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ Արարատի մարզի Գեղանիստի միջնակարգ դպրոցում հասցեն՝ ՀՀ Արարատի մարզ գ. Գեղանիստ 21/1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 81-30-08 հեռախոսահամարով: